Լրանում է Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի պրեզիդենտ, հաշվողական տեխնիկայի և կառավարման ավտոմատացված համակարգերի բնագավառի խոշոր մասնագետ ակադեմիկոս Ֆադեյ Տաճատի Սարգսյանի ծննդյան 80 տարին:

Ակադեմիկոս Ֆ. Սարգսյանին բնորոշ են մտքի պարզությունը, կշռադատված եզրահանգումները, հիմնահարցերի նկատմամբ վերլուծական մոտեցումը, համարձակ ու ստեղծարար որոշումներ ընդունելը, նորը գերապատվելը:

Գիտնականի և գիտության կազմակերպչի տաղանդը բացառիկ փայլով դրսևորվեց 1963-1978 թթ., երբ ակադեմիկոս Ֆ. Սարգսյանը գլխավորում էր Երևանի մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտը:

Ռազմավարական ճիշտ ընտրությունը Ֆ. Սարգսյանին հնարավորություն ընձեռեց ինստիտուտը կողմնորոշելու զինված ուժերի ու ժողովրդական տնտեսության համար հաշվողական տեխնիկայի միջոցների և կառավարման համակարգերի ստեղծման ուղղությամբ կարևորագույն պետական ծրագրերի իրագործմանը:

Դժվար է գերագնահատել Ֆ. Սարգսյանի վճռական դերը գիտատեխնիկական այնպիսի նոր ուղղության ձևավորման գործում, ինչպիսին է ավտոմատացված կառավարման համակարգերի մշակումը: Նրա ջանքերով Հայաստանի գիտատեխնիկական ներուժը ներգրավվեց ԽՍՀՄ պաշտպանության համար սկզբունքային նշանակություն ունեցող ամենաբարդ հիմնահարցերի լուծմանը:

Ինստիտուտում ձևավորվեց գիտնականների և առաջատար մասնագետների դպրոց, որի հիմնադիրներից մեկը և գիտական ղեկավարն էր իրավամբ համարվում ակադեմիկոս Ֆ. Սարգսյանը: Նրա աշխատությունները ծանրակշիռ ավանդ են հաշվողական տեխնիկայի և կառավարման ավտոմատացման բնագավառներում:

1993 թվականից Ֆ. Սարգսյանը Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի պրեզիդենտն է: Նրա ղեկավարությամբ ՀՀ ԳԱԱ համակարգում մեծ աշխատանք է կատարվել ակադեմիայի գիտական գործունեության կազմակերպման, Հայաստանի գիտական ներուժի պահպանման և զարգացման ուղղությամբ:

Ակադեմիկոս Ֆ. Սարգսյանը կատարել է նպատակաուղղված հետազոտություններ երկրի պաշտպանության, ինֆորմատիկայի, ժամանակակից գիտության այլ կարևորագույն ուղղությունների գծով: Նրա ղեկավարությամբ ստեղծվեց ակադեմիական գիտահետազոտական կոմպյուտերային ցանցը, որը հնարավորություն ընձեռեց մուտք գործելու դեպի համընդհանուր տեղեկատվական ռեսուրսները: Իրեն հատուկ եռանդով նա կարողացավ էապես ընդլայնել ակադեմիայի միջազգային համագործակցությունը:

Ակադեմիկոս Ֆ. Սարգսյանը խոշոր պետական գործիչ է: 12 տարի լինելով ՀԽՍՀ կառավարության նախագահ՝ նա մեծապես նպաստել է Հայաստանի տնտեսական կառուցվածքի կատարելագործմանը, արդյունաբերության, գյուղատնտեսության, շինարարության և այլ բնագավառներում նորագույն ճյուղերի ստեղծմանն ու զարգացմանը:

Ակադեմիկոս Ֆ. Սարգսյանը ԽՍՀՄ պետական մրցանակների և Ուկրաինայի պետական մրցանակի դափնեկիր է, արժանացել է բազմաթիվ կառավարական պարգևների, արտասահմանյան և հայրենական մի շարք ակադեմիաների, միջազգային գիտական և գիտատեխնիկական բազմաթիվ ընկերությունների անդամ է:

Այսօր ևս ակադեմիկոս Ֆ. Սարգսյանը պատվով է կատարում քաղաքացու և պետական գործչի իր բարձր առաքելությունը՝ իր գիտելիքներն ու փորձը ծառայեցնելով Հայաստանում գիտության զարգացմանն ու Հայաստանի անկախ պետության կայացմանը:

«Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի Զեկույցների» խմբագրությունը ողջունում է ակադեմիկոս Ֆադեյ Տաճատի Սարգսյանին ծննդյան 80-ամյակի առթիվ՝ ցանկանալով նորանոր հաջողություններ իր արգասավոր և հայրենանվեր գործունեության մեջ:

ՀՀ ԳԱԱ Զեկույցների
խմբագրություն